ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության, Շիրակի մարզի Գյումրի համայնք, Վարդանանց հր. 1
Հեռ. (+374 312) 3-46-05, 5-43-00; հեռապատճեն (+374 312) 3-26-06;
Էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

N 1/3-01/4323
20 „ 12 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ԳԻԶԻՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի 8-րդ ենթակետի՝ ուղարկվում է Գյումրի համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 12-ին կայացած N 2 նիստի NN 183-195 որոշումները:

Առդիր՝ 25 (քսանհինգ) թերթից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մտից թիվ 8158-12
21. 12 2012թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2012թվականի N 183 -Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (21)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա.Ադամյան		
Գ.Ադամյան		
Ա.Բաղեյան		
Ա.Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ.Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ.Խաչատրյան		
Հ.Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ.Հունանյան		
Ն.Մեսրոպյան		
Ռ.Մխիթարյան		
Է.Մկրտչյան		
Վ.Շիրինյան		
Ե.Պողոսյան		
Մ.Սահակյան		
Ա.Վարդանյան		
Տ.Փանոսյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ա.Ասատրյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ՝
Գյումրիի համայնքի ավագանու
2012թվականի դեկտեմբերի 12-ի
N168-Ա որոշմամբ

ՕՐԱԿԱՐԳ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

12 դեկտեմբերի 2012թվական, սկիզբը ժ. 14:00

1. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ.Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

2. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ (2013 – 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ) ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂՆԵՐ՝ Գ.ՄԱԼԽԱՍՅԱՆ
Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)**

3. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)**

4. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ.ՓԱՓԱԶՅԱՆ)**

5. ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)**

6. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի N403-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱՅԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 20,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)**

7. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՆՉԵՎ 20,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

8. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ)

9. ՌՈԲԵՐՏ ԺԻՐԱՅՐԻ ԷՄՄԻՅԱՆԻՆ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

10. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐ՝ Կ.ՄԱՆԱՍՅԱՆ
Ա.ՆԱԽՇՔԱՐՅԱՆ
Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

11. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ)

12. ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի << ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 193-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

13. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ <<ՄՈՒՇ-2>> ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԹԱՂԱՄԱՍԻ ՓՈՂՈՑՆԵՐԻՑ ՄԵԿԸ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԿԱՐՈ ՀԱԼԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Կ.ՄԱՆԱՍՅԱՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2012թվականի N 184 -Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ (2013 - 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ) ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով և 53-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Գյումրի համայնքի քառամյա զարգացման (2013-2016թվականների) ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (21)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա.Ադամյան		
Գ.Ադամյան		
Ա.Բաղեյան		
Ա.Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ.Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ.Խաչատրյան		
Հ.Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ.Հունանյան		
Ն.Մեսրոպյան		
Ռ.Մխիթարյան		
Է.Մկրտչյան		
Վ.Շիրինյան		
Ե.Պողոսյան		
Մ.Սահակյան		
Ա.Վարդանյան		
Տ.Փանոսյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2012թվականի N 185 -Ն

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 10-րդ հոդվածներով, 9-րդ հոդվածի 1-ին կետով և 11-րդ հոդվածի 1-ին կետով, <<Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետով, 10-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Սահմանել Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2013թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի դեկտեմբերի 6-ի <<Գյումրի քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2012թվականի դրույքաչափերը և մինչև 20 քառակուսի մետր մակերես ունեցող օբյեկտների վարձավճարները սահմանելու մասին>> N 175-Ն որոշման 1-ին կետը:

Կողմ (21)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա.Ադամյան		
Գ.Ադամյան		
Ա.Բաղեյան		
Ա.Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ.Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ.Խաչատրյան		
Հ.Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ.Հունանյան		
Ն.Մեսրոպյան		
Ռ.Մխիթարյան		
Է.Մկրտչյան		
Վ.Շիրինյան		
Ե.Պողոսյան		
Մ.Սահակյան		
Ա.Վարդանյան		
Տ.Փանոսյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ **Դ.Ասատրյան**

Հավելված՝
Գյումրի համայնքի ավագանու
2012թվականի դեկտեմբերի 12-ի
N 185-Ն որոշման

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

Տեղական տուրքերի դրույքաչափեր

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ **15000 /տասնհինգ հազար/ դրամ.**

բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **30000 /երեսուն հազար/ դրամ,**

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **50000 /հիսուն հազար/ դրամ,**

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **70000 /յոթանասուն հազար/ դրամ.**

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **3000 /երեք հազար/ դրամ,**

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **5000 /հինգ հազար/ դրամ:**

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **3000 /երեք հազար/ դրամ,**

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն բաժնի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի սենքերի գործառական նշանակության փոփոխությոան մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն,

որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն բաժնի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է **5000 /հինգ հազար/ դրամ:**

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամյակի համար՝ **12500 /տասներկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **12500 /տասներկու հազար հինգ հարյուր/ դրամ:**

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ **500 /հինգ հարյուր/ դրամ.**

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **300000 /երեք հարյուր հազար/ դրամ.**

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ **30000 /երեսուն հազար/ դրամ:**

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ **50000 /հիսուն հազար/ դրամ:**

7. Համայնքի ավագանու կողմից սահմանված՝ համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ **100 /մեկ հարյուր/ դրամ.**

բ) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ **1250 /մեկ հազար երկու հարյուր հիսուն/ դրամ.**

գ) մեկ շաբաթվա համար՝ **2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

դ) մեկ ամսվա համար՝ **12500 /տասներկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

ե) մեկ տարվա համար՝ **50000 /հիսուն հազար/ դրամ:**

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ **75000 /յոթանասունհինգ հազար/ դրամ.**

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ.**

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ **300000 /երեք հարյուր հազար/ դրամ.**

դ) խաղատների կազմակերպման համար՝ **1000000 /մեկ միլիոն/ դրամ.**

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ **500000 /հինգ հարյուր հազար/ դրամ.**

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ **200000 /երկու հարյուր հազար/ դրամ:**

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **4000 /չորս հազար/ դրամ.**

գ) այլ արտաքին գովազդի համար՝ **1000 /մեկ հազար/ դրամ.**

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ **1000 /մեկ հազար/ դրամ:**

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **5000 /հինգ հազար/ դրամ:**

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **10000 /տասը հազար/ դրամ:**

Տեղական վճարների դրույքաչափեր

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է՝ **15000 /տասնհինգ հազար/ դրամ,**

2. Համայնքի տարածքում ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է՝

ա) մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ոչ հիմնական շինությունների տեղադրման, ինչպես նաև մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ **10000 /տասը հազար/ դրամ.**

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 100-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **20000 /քսան հազար/ դրամ,**

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **35000 /երեսունհինգ հազար/ դրամ,**

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **50000 /հիսուն հազար/ դրամ:**

3. Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է՝ **40000 /քառասուն հազար/ դրամ:**

4. Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճարը սահմանվում է՝ **30000 /երեսուն հազար/ դրամ:**

5. Համայնքի վարչական տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառուցապատողների միջոցներով շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, օբյեկտների հարակից տարածքներում և փողոցներում սանիտարական մաքրման գործընթացը կազմակերպելու նպատակով, շինարարության թույլտվություն ձեռք բերելու ժամանակ գանձվող տեղական վճարը սահմանվում է՝

ա) պետական կամ պետականին հավասերացված ծրագրերի համար՝ կապալի պայմանագրային գնի 0.1% - ի չափով.

բ) այլ կառուցապատողների համար՝

բա) նախահաշվային փաստաթղթեր ներկայացնելու դեպքում՝ նախահաշվային արժեքի 0.1% - ի չափով,

բբ) նախահաշվային փաստաթղթերի բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակներ» արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուի համաձայն հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի 0.1% - ի չափով.

6. Համայնքի կողմից անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց գանձվող վճարը սահմանվում է՝ **1000 /մեկ հազար/ դրամ:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2012թվականի N 186 -Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի <<Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին>> N 286 որոշմամբ հաստատված կարգի՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Գյուղատնտեսական նպատակներով վարձակալության տրամադրված պայմանագրերում մեկ հեկտարի համար վարձավճարի գին սահմանել 70.000 /յոթանասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ ցուցակը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (21)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա.Ադամյան		
Գ.Ադամյան		
Ա.Բաղեյան		
Ա.Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ.Գաբրոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ.Խաչատրյան		
Հ.Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ.Հունանյան		
Ն.Մեսրոպյան		
Ռ.Մխիթարյան		
Է.Մկրտչյան		
Վ.Շիրինյան		
Ե.Պողոսյան		
Մ.Սահակյան		
Ա.Վարդանյան		
Տ.Փանոսյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռ.Ավագյան

Հավելված՝
Գյումրի համայնքի ավագանու
2012թվականի դեկտեմբերի 12-ի
N 186-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

Գյուղատնտեսական նշանակության հողատարածքների տարեկան վարձավճարների նոր սակագների

Հ/Հ	Ազգանուն Անուն	Մակերեսը	Նախկին միջին վարձաչափը դրամ	Տարեկան գումարը դրամ	1հա-ի նոր վարձաչափը դրամ	Տարեկան գումարը դրամ	Տարբերություն դրամ
1.	<<Բարիք>> ՓԲԸ Ավետիսյան Գագիկ	16.63հա	95416	1586777	70.000	1164100	-422677
2.	Մադոյան Արմենակ	10հա	50000	500000	70.000	700000	+200000
3.	Սիմոնյան Հմայակ	6.3հա	81000	510000	70.000	441000	-69000
4.	Պետրոսյան Արթուր	52.17հա	15717	820000	70.000	3652000	-2832000
5.	Տեփանոսյան Սիսակ	3904.5քմ	124000	48500	70.000	27400	-21100
6.	Կուրղինյան Ջանիբեկ	3000քմ	133300	40000	70.000	21000	-19000
7.	Հովհաննիսյան Շալիկո	1394քմ	81000	11300	70.000	9800	-1500
8.	Սարիբեկյան Սամվել	6417.14քմ	81000	52000	70.000	45000	+7000
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	86,6հա		3568577		6060300	2,49մլն

Բյուջեի եկամուտների հաշվառման բաժնի պետ Հ.Փափազյան

Կատ. Ս.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2012թվականի N 187 -Ա

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Գյումրու համայնքային ենթակայության մարզադպրոցների մասնագիտացված ուղղությունները՝ **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի <<Համայնքային սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին>> N 51 որոշման N1-10 հավելվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 873-Ա որոշման, Գյումրու համայնքային սեփականության իրավունքով հանձնված գույքի ցանկում ընդգրկված մարզադպրոցների անվանումները վերանվանել պետական ռեգիստրում գրանցված անվանումներով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսական բաժնին՝ կադաստրի և ռեգիստրի հետ կապված փոխանցումները կատարել բյուջեում նախատեսված դասակարգված գումարներից:

Կողմ (21) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան
Գ.Ադամյան
Ա.Բաղեյան
Ա.Բաղրամյան
Լ.Բարսեղյան
Մ.Գաբոյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ.Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան
Ա.Վարդանյան
Տ.Փանոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ **Ի.Ասատրյան**

Հավելված՝
Գյումրու համայնքի ավագանու
2012թվականի դեկտեմբերի 12-ի
N 187-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ Ի ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ

Հ/Հ	ՀՀ կառավարության 1997թվականի մարտի 14-ի N 51 որոշման N 1-10 հավելվածի անվանացանկով մարզադպրոցների անվանումները	Ներկայումս վերանվանված անվանումները
1.	<<Թիվ -2 մարզադպրոց>>	ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի <<Սամբո- ձյուդոյի մարզադպրոց>> ՀՈԱԿ
2.	<<Թիվ -4 մարզադպրոց>>	ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի <<Արամ Սարգսյանի անվան համալիր մարզադպրոց>> ՀՈԱԿ
3.	<<Թիվ -5 մարզադպրոց>>	ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի <<Համալիր մարզադպրոց-2>> ՀՈԱԿ
4.	<<Թիվ -6 մարզադպրոց>>	ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի <<Թենիսի և սեղանի թենիսի մարզադպրոց>> ՀՈԱԿ
5.	<<Թիվ -7 մարզադպրոց>>	ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի <<Ազատ ոճի ըմբշամարտի մարզադպրոց>> ՀՈԱԿ
6.	<<Ծանրամարտի մարզադպրոց>>	ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի <<Յու. Վարդանյանի անվան ծանրամարտի մարզադպրոց>> ՀՈԱԿ
7.	<<Շախմատի և շաշկու մարզադպրոց>>	ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի <<Շախմատի մարզադպրոց>> ՀՈԱԿ
8.	<<Թիվ -1 Համալիր մարզադպրոց>>	ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի <<Հրաձգության մարզադպրոց>> ՀՈԱԿ
9.	<<Թիվ -2 Համալիր մարզադպր. >>	<<Գյումրու մարմնամարզիկ>> ՓԲԸ
	Հայաստանի Հանրապետության Կառավարություն հունիսի 23 -ի 2005թ. N873 –Ա որոշմամբ	**Ներկայումս վերանվանված անվանումները**
10.	<<Եռանկյունի թաղամասի հասարակական կենտրոն>>	ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի <<Բոնցքամարտի մարզադպրոց> ՀՈԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2012թվականի N 188 -Ա

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի N 403-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱՅԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 20,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Հակոբյանի դիմումը (գրանցված քաղաքապետարանում 2012թվականի դեկտեմբերի 4-ին N5842) և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 431-րդ հոդվածով՝ **համայնքի ավագանին որոշում է՝**

Ներել քաղաքացի Գևորգ Հակոբյանին քաղաքապետի 2009թվականի մարտի 9-ի <<Քաղ. Գևորգ Հակոբյանին ժամանակավոր տաղավար տեղադրելու նպատակով 20,0 քառ.մ մակերեսով հողամաս կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին>> N 403-Ա որոշմամբ հաստատված վարձակալության հիմունքներով տրամադրված հողամասի գծով գոյացած պարտքը՝ 192553 /մեկ հարյուր իննսուներկու հազար հինգ հարյուր հիսուներեք/ դրամ մայր գումար և 59065 /հիսունինը հազար վաթսունհինգ/ դրամ տույժ, ընդամենը 251618 /երկու հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր տասնութ/ դրամ գումար:

Կողմ (21)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա.Ադամյան		
Գ.Ադամյան		
Ա.Բաղեյան		
Ա.Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ.Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ.Խաչատրյան		
Հ.Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ.Հունանյան		
Ն.Մեսրոպյան		
Ռ.Մխիթարյան		
Է.Մկրտչյան		
Վ.Շիրինյան		
Ե.Պողոսյան		
Մ.Սահակյան		
Ա.Վարդանյան		
Տ.Փանոսյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2012թվականի N 189 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՆՉԵՎ 20,0 ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 48[1] հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի <<Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին>> N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2. կետի ա) ենթակետը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում տաղավարների, կրպակների, առևտրի ու սպասարկման այլ օբյեկտների և ավտոտնակների տեղադրման նպատակով առանց մրցույթի մինչև 20,0 քառ.մ մակերեսով հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման համար սահմանել վարձավճարներ՝ համաձայն հավելվածի:

Կողմ (21)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա.Ադամյան		
Գ.Ադամյան		
Ա.Բաղեյան		
Ա.Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ.Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ.Խաչատրյան		
Հ.Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ.Հունանյան		
Ն.Մեսրոպյան		
Ռ.Մխիթարյան		
Է.Մկրտչյան		
Վ.Շիրինյան		
Ե.Պողոսյան		
Մ.Սահակյան		
Ա.Վարդանյան		
Տ.Փանոսյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ
Ա.Ասատրյան

Գրասենյակի ղեկավարի
2016թվականի դեկտեմբերի 12-ի
N 199-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՆՉԵՎ 20,0 ՔԱՌԱՄԵՏՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒՄՆԵՐ

1. ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

N	Հողամասի գտնվելու վայրը	Մեկ քառակուսի մետրի ամսական վարձավճարը /ՀՀ դրամ/
1.	Շահումյան փողոց /կենտրոնական հրապարակից մինչև Ավտոկայան/ Հաղթանակի պողոտա /Խաղաղության օղակից մինչև Զորավար Անդրանիկի հրապարակ/ Մայակովսկու փողոց /Հաղթանակի պողոտայից մինչև Աբովյան փողոց/	1700 /մեկ հազար յոթ հարյուր/
2.	Կենտրոնական հրապարակ Ռիժկովի /Կիրովի/ փողոց Անկախության հրապարակ Ավտոկայանի տարածք Գայի փողոց Տերյան փողոց /Գ.Նժդեհի հրապարակից մինչև Աբովյան փողոցն ընկած հատված/ Բագրատունյաց /Խաղաղության/ օղակ Սայաթ-Նովա փողոց Պ.Սևակ փողոց Շառլ Ազնավուրի հրապարակ	800 /ութ հարյուր/
3.	Կայարանամերձ հրապարակ Գորկու փողոց Շահումյան փողոց /Ռուսթավելի փողոցից մինչև Պուշկինի փողոց/ Աբովյան փողոց /Ռուսթավելի-Տերյան/ Տիգրան Մեծի պողոտա Գ.Նժդեհի պողոտա Շիրակացի փողոց Խրիմյան Հայրիկ փողոց Ալեք Մանուկյան փողոց /50-ամյակի փողոց/ Սպանդարյան փողոց /Կենտրոնական հրապարակից Հաղթանակի պողոտա/ Պուշկինի փողոց Մուսայելյան փողոց Չերազի փողոց «Անի» թաղ. շուկայամերձ տարածք /7-րդ փողոց, Պ.Սևակից մինչև Ե.Չարենց/ Խորենացի փողոց Վ.Սարգսյան փողոց Երևանյան խճուղի	600 /վեց հարյուր/
4.	Սևյան փողոց Իսահակյան փողոց Մանուշյան փողոց Կոշտոյան փողոց Ռուսթավելի փողոց	

	Շչեբրինա փողոց Մ.Մկրտչյան փողոց Ներսես Շնորհալի փողոց Պռոշյան փողոց Մ.Ավետիսյան փողոց Տ.Ճարտարապետի փողոց Չարենցի փողոց Կարսի խճուղի Բուլվարային փողոց Կ.Դեմիրճյան /Քութախյան/ փողոց Թետչերի փողոց Շինարարների փողոց Խանջյան փողոց Սավոյան փողոց Օզանյան փողոց	450 /չորս հարյուր հիսուն/
5.	Քաղաքի մնացած տարածքներում	250 /երկու հարյուր հիսուն/

2. ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

N	*Հողամասի գտնվելու վայրը*	Մեկ քառակուսի մետրի ամսական վարձավճարը /ՀՀ դրամ/
1.	*I գոտի*	110 /մեկ հարյուր տաս/
2.	II գոտի	100 /մեկ հարյուր/
3.	III գոտի	80 /ութսուն/
4.	IV գոտի	70 /յոթանասուն/

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2012թվականի N 190 -Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 24-ի <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի հունիսի 22-ի N922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 164-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 3-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Ստեղծել Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:
2. Հաստատել Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2009թվականի հուլիսի 9-ի <<Գյումրու քաղաքային համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից հանձնաժողովի նոր կազմ հաստատելու մասին>> N 10-Ա որոշումը:

Կողմ (21)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա.Ադամյան		
Գ.Ադամյան		
Ա.Բաղեյան		
Ա.Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ.Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ.Խաչատրյան		
Հ.Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ.Հունանյան		
Ն.Մեսրոպյան		
Ռ.Մխիթարյան		
Է.Մկրտչյան		
Վ.Շիրինյան		
Ե.Պողոսյան		
Մ.Սահակյան		
Ա.Վարդանյան		
Տ.Փանոսյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ա.Ասատրյան

Հաստատված՝
Գյումրու համայնքի ավագանու
2022թվականի սեպտեմբերի 12-ի
N 190-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ.Ասատրյան – Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի քարտուղար՝

Թ.Գրիգորյան – աշխատակազմի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ՝

Ներսիկ Ղարաքեշիշյան – աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման՝ սոցիալական ծառայությունների Գյումրի-1 տարածքային բաժնի պետ

Էդուարդ Բաղրամյան - աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման՝ սոցիալական ծառայությունների Գյումրի-2 տարածքային բաժնի պետ

Կարինե Կուրղինյան - <<Վորլդ Վիժն ՄԲԿ>> Գյումրիի ՍԶԾ-ի համադասող

Հասմիկ Սարգսյան - <<Հայկական Կարիտաս>> ԲՀԿ-ի երեխաների սոցպաշտպանվածության ուղղության ծրագրի ղեկավար

Լիդա Ադամյան – Շիրակի մարզպետարանի ԸԿԵՊԲ-ի հոգեբան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2012թվականի N 191 -Ա

ՌՈԲԵՐՏ ԺԻՐԱՅՐԻ ԷՄՄԻՅԱՆԻՆ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռոբերտ Ժիրայրի Էմմիյանը ծնվել է Լենինական քաղաքում:

Սովորել և ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, այնուհետև Երևանի պետական տնտեսագիտական համալսարանը:

1986թվականին Շտուտգարդ քաղաքում արժանացել է Եվրոպայի չեմպիոնի պատվավոր տիտղոսին, Մադրիդում Եվրոպայի չեմպիոն մարզասրահում տիտղոսին, Մոսկվայում <<Բարի կամքի>> խաղերում գրավել է առաջին տեղը, Ավստրալիայում գրավել է աշխարհի գավաթի երկրորդ տեղը, աշխարհում առաջին կարգի հեռացատկորդ, Հռոմում աշխարհի առաջնությանը գրավել է երկրորդ տեղը, Ֆրանսիայում արժանացել է <<Եվրոպայի չեմպիոն մարզասրահում>> տիտղոսին, երկրորդ կարգի հեռացատկորդ աշխարհում:

1987թվականին՝ 8մ.86սմ հեռացատկի Եվրոպայի ռեկորդակիր:

1988թվականին՝ Սեուլի օլիմպիական խաղերի մասնակից, Մոսկվայում՝ ազգային չեմպիոն:

1996թվականին՝ Ատլանտայի օլիմպիական խաղերի մասնակից:

Մինչև օրս հանդիսանում է հեռացատկի Եվրոպայի ռեկորդակիր, Ֆրանսիայի սպորտի նախարարի կողմից պարգևատրվել է արծաթե մեդալով:

Ռոբերտ Էմմիյանը ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ է, Եվրոպայի աթլետիկայի ասոցիացիայի հանձնաժողովի անդամ է, Արևելաեվրոպական երկրների աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի կողմից պարգևատրվել է մեդալով:

Հաշվի առնելով սպորտի բնագավառում ունեցած մեծ ավանդը, Հայկական դրոշը աշխարհի տարբեր երկրներում բարձր պահելը, հեռացատկի 8մ,86սմ Եվրոպայի ռեկորդ սահմանելու 25-ամյակը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 24-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է՝**

Ռոբերտ Ժիրայրի Էմմիյանին շնորհել <<Գյումրու պատվավոր քաղաքացի>> կոչում:

Կողմ (21)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա.Ադամյան		
Գ.Ադամյան		
Ա.Բաղեյան		
Ա.Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ.Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ.Խաչատրյան		
Հ.Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ.Հունանյան		
Ն.Մեսրոպյան		
Ռ.Մխիթարյան		
Է.Մկրտչյան		
Վ.Շիրինյան		
Ե.Պողոսյան		
Մ.Սահակյան		
Ա.Վարդանյան		
Տ.Փանոսյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ **Ղ.Ասատրյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2012թվականի N 192 -Ա

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի մանկապարտեզների, սոցիալապես անապահով երեխաների և քաղաքապետարանի աշխատակիցների երեխաների համար ամանորյա միջոցառումներ կազմակերպելու կապակցությամբ, ինչպես նաև սահմանված կարգով տարվա լավագույն մարզիկներին պարգևատրելու, կենտրոնական հրապարակը տոնական տեսքի բերելու և քաղաքային տոնածառը զարդարելու համար անհրաժեշտություն կա հատկացնել դրամական միջոցներ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և ելնելով հարցի լուծման անհրաժեշտությունից՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Թույլատրել Գյումրի համայնքի 2012թվականի բյուջեի այլ ծախսերից կատարել ամանորյա միջոցառումներ.

1. Գյումրի համայնքի մանկապարտեզների, սոցիալապես անապահով երեխաների և քաղաքապետարանի աշխատակիցների երեխաների համար ամանորյա միջոցառումներ կազմակերպելու համար հատկացնել 10/4/1 գործառնական դասակարգման տնսեսագիտական այլ նպաստներ բյուջեի /4729/ հոդվածից 2500.0 հազար /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ:

2. Տարվա լավագույն մարզիկներին դրամական օգնություն հատկացնել 8/1/1 գործառնական դասակարգման տնտեսագիտական կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեի /4727/ հոդվածից 2000.0հազար /երկու միլիոն/ դրամ:

3. Կենտրոնական հրապարակը տոնական տեսքի բերելու և քաղաքային տոնածառը զարդարելու համար հատկացնել 8/6/1 գործառնական դասակարգման տնտեսագիտական այլ ծախսեր /4239/ հոդվածից 3000.0 հազար /երեք միլիոն/դրամ:

Կողմ (21) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան
Գ.Ադամյան
Ա.Բաղեյան
Ա.Բաղրամյան
Լ.Բարսեղյան
Մ.Գաբոյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ.Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան
Ա.Վարդանյան
Տ.Փանոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ **Ռ.Սամսոնյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 22 >> նոյեմբերի 2012թվականի N 193 -Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամանորի կապակցությամբ արցախյան պատերազմում զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, ինչպես նաև մահացած զինծառայողների ընտանիքներին, Հայրենական մեծ պատերազմի վետերաններին դրամական օգնություն հատկացնելու մասին հարցի լուծման անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Արցախյան պատերազմում զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, ինչպես նաև մահացած զինծառայողների ընտանիքներին, Հայրենական մեծ պատերազմի վետերաններին Գյումրի համայնքի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ 10/7/1/51 գործառնական դասակարգման այլ նպաստներ բյուջեից /4729/ տնտեսագիտական գործառնական հոդվածից ցույց տալ դրամական օգնություն 5030.0/հինգ միլիոն երեսուն հազար/դրամ, որը կբաշխվի արցախյան պատերազմում զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, ինչպես նաև մահացած զինծառայողների ընտանիքներին, Հայրենական մեծ պատերազմի վետերաններին՝ թվով 354 մարդ:

2. Հանձնարարել ֆինանսական բաժնի պետ Լ.Ջիլավյանին՝ տրամադրել գումարները:

Կողմ (21) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան
Գ.Ադամյան
Ա.Բաղեյան
Ա.Բաղրամյան
Լ.Բարսեղյան
Մ.Գաբոյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ.Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան
Ա.Վարդանյան
Տ.Փանոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ **Ռ.Ասատրյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2012թվականի N 194 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 193-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակնկալվող մուտքերը մինչև տարեվերջ լրիվությամբ չապահովելու, ինչպես նաև առանձին ծախսեր չֆինանսավորելու անհրաժեշտությունից ելնելով կարիք է առաջացել ծախսերի սահմանափակման /սեկվեստրի/ մեխանիզմի կիրառմանը:

Հաշվի առնելով վերոգրյալ հարցի անհրաժեշտությունը և ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրու քաղաքային համայնքի 2012թվականի եկամտային և ծախսային մասերի պլանը պակասեցնել 364000.0 /երեք հարյուր վաթսունչորս միլիոն/ դրամ՝ ֆոնդային բյուջե 294000.0 հազ. դրամ, այն է՝ հողի օտարումից մուտքեր 214000.0 հազ.դրամ /900215301145/, այլ հիմնական միջոցների օտարումների մուտքեր 80000.0հազ.դրամ, վարչական բյուջե 70000.0 հազ. դրամ:

2. Կատարել տեղաշարժ 1/6/1գործառնական դասակարգման 4241 հոդվածի չորրորդ եռամսյակից 2000.0 /երկու միլիոն/ դրամ 9/1/1 գործառնական դասակարգման 4511 հոդվածի չորրորդ եռամսյակին:

3. Հանձնարարել ֆինանսական բաժնի պետ Լ.Ջիլավյանին՝ 2012թվականի գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածներում կատարել համապատասխան փոփոխություններ՝ համաձայն NN 1-2 հավելվածների և ճշտված նախահաշիվների հետ միասին ներկայացնել Գյումրու տեղական գանձապետական բաժանմունք:

Այսպիսով Գյումրու քաղաքային համայնքի 2012թվականի բյուջեի եկամտային մասում փոփոխություններ կատարելուց հետո բյուջեն կկազմի **2900500.2 հազ.դրամ** /երկու միլիարդ ինը հարյուր միլիոն հինգ հարյուր հազար երկու հարյուր/. այն է՝ վարչական բյուջե **2654500.2 հազ.դրամ,** ֆոնդային բյուջե **246000.0 հազ.դրամ:**

Կողմ (21) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան
Գ.Ադամյան
Ա.Բաղեյան
Ա.Բաղրամյան
Լ.Բարսեղյան
Մ.Գաբոյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ.Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան
Ա.Վարդանյան
Տ.Փանոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ **Ռ.Ասատրյան**

Հավելված N 1
Գյումրի համայնքի ավագանու
2012թվականի դեկտեմբերի 12-ի
N 194-Ն որոշման

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 193-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՏՎԱԾ 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տողի NN	Եկամտատեսակները	վարչական բյուջե			ֆոնդային բյուջե		
		2012թ բյուջե	պակասեց ավելաց.	Ընդամենը ճշտված	2012թ բյուջե	պակասեց ավելաց.	Ընդամենը ճշտված
1	5	7	8	7	12	13	14
1110	**1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից**						
	այդ թվում՝	147300.0	-13500.0	133800.0			
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	101000.0	-8000.0	93000.0			
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	46300.0	-5500.0	40800.0			
1130	**1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ**						
	այդ թվում՝	121818.0	-8100.0	113718.0			
1131	Տեղական տուրքեր						
	այդ թվում՝	121818.0	-8100.0	113718.0			
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	147452.0	-30400.0	117052.0			
1350	**3.5 Վարչական գանձումներ**	221000.0	0.0	203000.0			
	այդ թվում՝						
1353	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ	221000.0	-18000.0	203000.0			
	նույն թվում						
	տրանսպորտային գանձումներ երթուղային տաքսիներից	33000.0	-10000.0	23000.0			
	աղբահանություն	188000.0	-8000.0	180000.0			
6000	**Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ** (տող6100+տող6200+տող6300+տող6400)						
	այդ թվում՝						
6100	**ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ** (տող6110+տող6120+տող6130)				100000.0	-80000.0	20000.0
	այդ թվում՝						
6110	***ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ***						
6400	**ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ՝** (տող6410+տող6420+տող6430+տող6440)				440000.0	-214000.0	226000.0
	այդ թվում՝						
6410	***ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ***						
	ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	966156.0	-70000.0	896156.0			
	Պատվիրակված լիազորություններ	35278.2		35278.2			
	Դոտացիա	1723066.0		1723066.0			
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	***2724500.2***	***-70000.0***	***2654500.2***	***540000.0***	***-294000.0***	***246000.0***

Հավելված N 2
Գյումրի համայնքի ավագանու
2012 թվականի հոկտեմբերի 12-ի
N 194-Ն որոշման

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի 193-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՏՎԱԾ
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	2012թ բյուջե	Պակասեցում,ավելացում + , -	Ճշտված պլան
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		*526577.5*	*70000.0*	*456577.5*
				1. Կառավարման մարմնի պահպանում				
2111	01	1	1	-Ներքին գործուղումներ	4221	3380.0	1000.0	2380.0
	01	1	1	-Տեղեկատվական ծառայություններ	4234	11450.0	3000.0	8450.0
	01	1	1	-Մասնագիտական ծառայություններ	4241	2000.0	1000.0	1000.0
2451	**04**	**5**	1	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	15063.5	1000.0	14063.5
				Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	4251	113000.0	24000.0	89000.0
2511	05	1	1	Կոմունալ ծառայություններ	4213	181684.0	26500.0	155184.0
2561	05	6	1	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	4000.0	3000.0	1000.0
2641	06	4	1	Էներգետիկ ծառայություններ	4212	196000.0	10000.0	186000.0
				Ոչ ֆինանսական ակտիվների զծով ծախսեր		*737407.8*	*294000.0*	*443407.8*
5111	01	1	1	Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111	30000.0	25000.0	5000.0
5112	01	1	1	Շենքերի և շինությունների կառուցում	5112	116056.5	83000.0	33056.5
5112	08	2	7	Շենքերի և շինությունների կառուցում	5112	60000.0	5000.0	55000.0
5113	04	5	1	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	492351.3	151000.0	341351.3
5131	05	6	1	Աճեցվող ակտիվներ	5131	10000.0	7000.0	3000.0
5134	04	5	1	Նախագծահետազոտական ծախսեր	5134	29000.0	23000.0	6000.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2012թվականի N 195 -Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ <<ՄՈՒՇ-2>> ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԹԱՂԱՄԱՍԻ ՓՈՂՈՑՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԿԱՐՈ ՍԵՄՅՈՆԻ ՀԱԼԱԲՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 21-րդ կետով, 32-րդ հոդվածի 15-րդ կետով և բարձր գնահատելով մեծանուն հայազգի ճարտարապետ, ԽՍՀՄ Ճարտարապետական ակադեմիայի հիմնադիր և փոխնախագահ, Մոսկվայի երկարամյա գլխավոր ճարտարապետ Կարո Սեմյոնի Հալաբյանի ներդրումը Հայաստանի ճարտարապետության մեջ, ծննդյան 115-ամյակի կապակցությամբ՝ **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Գյումրի քաղաքի <<Մուշ-2>> նորաստեղծ թաղամասի արևելքից արևմուտք գտնվող կենտրոնական փողոցը անվանակոչել Կարո Հալաբյանի անվամբ:
2. Հանձնարարել քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնին՝ կազմակերպելու վերը նշված փողոցի անվանատախտակի պատրաստման և տեղադրման աշխատանքները:
3. Հանձնարարել քաղաքապետարանի ֆինանսական բաժնին՝ կատարելու անվանատախտակի պատրաստման և տեղադրման համար անհրաժեշտ վճարումը՝ համաձայն ներկայացված ակտերի:
4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Գյումրու բաժին, հրապարակել մամուլում և հեռուստատեսությամբ:

Կողմ (21) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան
Գ.Ադամյան
Ա.Բաղեյան
Ա.Բաղրամյան
Լ.Բարսեղյան
Մ.Գաբոյան
Ա.Գրիգորյան
Վ.Եղիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ.Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան
Ա.Վարդանյան
Տ.Փանոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ **Ռ.Ավագյան**